# ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ





Ալ. Մյասնիկյանի անվան կոնյա-քի ա/մ գլխամասային ձեռնարկու-թյան թղթյա պիտույքների արտադրամասի կոլեկտիվը գործնական օգնություն է ցույց տալիս Արցախի մեր հայրենակիցներին: Մինչև նոր ուսումնական տարվա սկսվելը Ստեփանակերտ կուղարկվի մեկ միլիոն աշակերտական տետր:

— Իրենց արդարացի պահանջի պայքարում գտնվող մեր հայրենակիցներին գործնական աջակցություն ցույց տալը յուրաքանչյուրիս պարտքն է, — ասացին արտադրամասի աշխատողները:

**ՆԿԱՐՆԵՐՈՒՄ՝**

◆ **Մեքենավար Արշավիր Հակոբյանը:**

◆ **Կազմարարներ Սոֆիկ Կարապետյանը, Լիդա Գևորգյանը, վարպետ, աշխատանքի վետերան Գրիգոր Քանքանյանը, Մարիամ Վահանյանն ու Սուսաննա Կարապետյանը:**

◆ Փաթեթավորող Ջուլիետա Առոյանը:

Լուսանկարները՝ Ժ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ